Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՄԱՐՏ 15 1893 Թիւ 5

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

«Հայքի» այս տարուան բաժանորդաց զգալի կերպով աճումն չէ իւր միակ յաջողութիւնն։ Ազգին քան զամենայն մշակեալ և հասկացող անհատներ որոց ոմանց դիմած եմք ու կը դիմեմք, յօժար կ'երեւին իրենց անձնուէր աշխատութիւն մեզ շնորհելու, Ազգային Դատին և Հայրենեաց գործին վերայիրենց խորհուրդներ «Հայք»ի միջոցաւ հրատարակելու։ Ներկայ Թուոյ մէջ պիտի գտնեն ընթերցողք հասուն համալսարանականի մի մէկ յօդուածն «Մեր Գործ և Զայն Գործելու Եղանակն» խորագրով, որ կրթական գործին հոգ տանելու հարկին վերայ կը պնդէ իբրեւ միջոց վերջնական և տեւական յաջողութեան։

Ի հարկէ այդ կարգի անհատից յօդուածներն նոյնութեամբ կը հրատարակուին, թէպէտ և ամեն կեսի վերայ կատարելապէս համախոհ չլինի «Հայք»ի խմբագիրն. բաւական է որ յօդուածն լուսաւոր մտքի ծնունդ լինի և հասուն ուսումնասիրութեան արդիւնք։

«Հայքի» կարծեօք շատ արժէք չունի թերթ մի որու մէջ հրատարակուող բոլոր յօդուածներ ճշդիւ համաձայն են հրատարակչին գաղափարաց, քանզի այդ պայմանաց մէջ թերթն գրեթէ միայն խմբագրին կարծիքներն հրապարակ հանելու ծառայած կը լինի։ «Հայք» ոչ լոկ իւր խմբագրին այլ բոլոր զգօն և բանիմաց հայրենասիրաց խորհուրդներուն գործին լինելու մէջ կը խնդրէ իւր մեծագոյն օգտակարութիւն և փառք։

Ընթերցողք կը յիշեն թէ անցեալ տարի Ճավայի Սուրապայա քաղաքի «Հայոց Խրախուսական Միաբանութիւնն» յօգուտ կեդրոնական Ցանձնախմբի 600 ֆրանքի գումար միյդած էր Նիւ Եորքի Հ. Հ. Ցանձնախմբի, և սա յետոյ դարձուցած էր ըզգումարն, խնդրելով որ կա՛մ «Միաբանութիւնն» ինքն պահպանէ զայն կա՛մ, եթէ հաճելի թուի, յղէ զայն Փարիզի Ցանձնախմբին ի պահեստ։

Նոյն Միաբանութեան կողմանէ մի նոր նամակ ստացաւ Նիւ Եորքի Ցանձնախումբն՝ ծանուցանող թէ վերոյիշեալ գումարն անցեալ Դեկտ. 26ին յղած են առ Ցանձնախումբն Փարիզի, ի պահեստ, որպէս զի երբ կեդրոնն կազմուի, դրուի գումարն նորա տրամադրութեան տակ։ Նամակն ստորագրուած է Պատ. «Միաբանութեանն» նախագահ Մեծ. Սամ Ցովակիմի և քարտուղար Մեծ. Ց. Տէր Կ. Ցորդանեանի կողմանէ։

Սուրապայի «Հայոց Խրախուսական Միաբանութիւնն» այսու ապացոյց կուտայ թէ մեր պիտոյից և վիճակի իմաստուն հասկացողութիւնն ունենալէ զատ՝ նաև գերազանցապէս գործնական տրամադրութեանց տէր է, բաներ որք քիչ Հայերու տրուած են դժբաղդաբար։ Շատեր կան որք խօսքով միայն են ինչ որ կը թուին լինել։

ՀԱՅԿ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York. N. Y.

Address Հայկ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՌՈՒՆԴԻԿՈՒԹԻՒՆ

Անաւոր վիճակ Տաճկահայոց. — Մոլեգնեալ խմբագիրն. — Մեր գործ և զայն գործելու եղանակն. — Նոր բան մի Թուրքիոյ մէջ. — Ամերիկայի հայերն, դպրոցներ հաստատել կուզեն ի հայրենիս. — Ամերիկայի հայերուն գործադուլը. —Այլևայլք։

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտատ տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց

Պրօտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

Ուսուցիչներ և ուսանողք ենովեր այժմու ազգային ճգանց մէջ առաջնորդողներ, իսկ հայ մեծատունք ի գնին կան գրեթէ անյոյս և անգործ։ Բացառութիւն են գոնէ դրամով և մանաւանդ գործօն մասնակցութեամբ քաջալերք և օժանդակ հանդիսացող Հայերն։ ԳԱԲՐԻԷԼ ԷՔՆԱՑԵԱՆ, որ անցեալ տարի կնքեց իւր մահկանացուն, մասնաւոր յիշատակի արժանի է իբրև բացառութիւն կամ իբրև մին ի հազուագիւտ բացառութեանց։ Նա բաւական հարուստ ոք էր և ադամանդի պատուաւոր վաճառական ի Փռանսական մայրաքաղաքին։ Կ'օգնէր ուսանողաց, ձեռն և խորհուրդ կուտար գործիչներու, առաւելապէս էր Հայ Հայրենասիրաց Միութեանն Փարիզու, և ինքն էր դլխաւոր հիմնական այն շարժման որ եղաւ կանոնագրեալ Միութիւններն կեդրոնացունելու համար, թէև չյաջողեցաւ։

Փարիզեան Հայ Հայրենասէրք հանդանակութիւն մի բացած են ի յիշատակ Էքնայեանի կիսարձան մի կանգնելու։ Ձեռնարկն քաջալերութեան արժանի է։ Արժան է որ Ամերիկայի հայրենասէրք ևս իրենց լումայն տան ի յիշատակ այն բացառիկ հայրենասիրին որ առանց ազգի բաց մեծ իմաստութեամբ կը գործէր։ Պէտք է գիտնամք պատուել այնպիսի համեստ գործիչ մի որ աւելի կ'արժէր քան չատ մի գրդռացունող գործիչներ։

Ահա՛ին գումար չինդրուիր, այլ ամերիկայի հայ Հայրենասիրաց լումայն, որպէսզի կիսարձանն Հայք կանգնած լինին ոչ թէ Փարիզի հայերն։ Որոնք որ կ'ըմբռնեն այս առաջարկի պատշաճութիւնն ու կարեւորութիւն, թող հաճին իրենց նուէր յղել կամ խմբագրութեանս և կամ Փարիզի Հայ Հայրենասիրաց Միութեան նախագահին— Monsieur J. Iskender, 10 bis Rue de Chateaudun, Paris, France. Որոնք որ «Հայք»ի յղեն իրենց նուիրատուութիւն, թող հաճին իմացունել թէ «Հայքի» մէջ իրենց բուն անո՞ւամբ թէ սկզբնատառերովն կամ կեղծ անուամբ պէտք է յիշել զիրենք։

«Հայք» ի նպաստ Էքնայեան կիսարձանին կը նուիրէ հինգ տոլար, և կը յուսայ թէ յօժարամիտք կը պատասխանեն այս հրաւէրին անյապաղ։

Տեսնել առ այս Փարիզեան նամակն անցեալ տարւոյ «Հայքի» 16դ թուոյն մէջ։

ԱՀԱՒՈՐ ՎԻՃԱԿ

ՏՍՃԿԱՀԱՅՈՑ

Ա.

Հնար չէ առանց ցաւմնալիր սարսափման լսել Թուրք խաժանին վերջին հայատեաց ցոյցերն որք Սերաստիոյ և Էնկիւրիի գաւառաց մէջ տեղի ունեցած են անցեալներ, և որք արիւնահեղութեանց և կոտորածներու անօրինակ չարք մի նախաբանել կը թուին։

Տաճկահայք այժմ գլխովին անօգնական և անպաշտպան մնացած են Թուրք իշխանութեանց ստից ներքև, այն պայմանաւ որ փառք տան բարեգութ Փատիշահին և դրամ՝ տեղական հարստահարչաց։— եւ եթէ համարձակի ոք ճիկ հանել, այդ ի ձեռս կառավարութեան բաւական ապացոյց կը լինի Հայոց ապերախտութեան և ապստամբական տրամադրութեան, հետևապէս զայնս դիւահարի կատաղութեամբ կոխոտելու։

Թուրքն յարուեստս և ի գիտութիւնս յառաջ չերթար, բայց իւր խաղաղ հպատակներն օրինական պատրուակաւ հարստահարելու արուեստին մէջ յառաջ կ'երթայ հսկայաքա՛յլ։

Քսան տարի առաջ հարստահարութիւնք դառն էին, զեղծմունք, բռնութիւնք, առևանգմունք, յափշտակութիւնք ազգային կալուածոց և անհատական ստացուածոց կը թուէին ծայրայեղ։ Դուռն ինքնին ճանաչելով թէ բարեկարգութեանց պէտք կայ, թէ Հայոց ինչքն, պատիւն ու կեանք պարտի պաշպանել Քրդաց դէմ ու զեղծ կառավարչաց դէմ, ըստորագրեց 61դ յօդուածն։ Բայց երբ վայրկեան մի մտածենք թէ այդ յօդուածի ստորագրուելէն ի վեր ո՞րքան աւելի վատթարացած է Թրքահայ գաւառաց վիճակ, ապշութիւն և սոսկում կը պատէ զմեզ։

Բ

Դիտենք յետահայեաց ակնարկիւ մի թէ ինչ քայլեր առած է Թուրքն յընթացքս վերջին 15 ամաց։

1878ին կը գտնենք զինքն սակաւիկ մի մեղմացած, ամբարտաւան դերեն գրեթէ վայրահակ։ Հայն ալ փոքր ինչ խաղար կ'երեւի յաչս խանարհած Թրքին, մանաւանդ որ հայկական ջղերով ջղաւորեալ էր Մոսկոֆի բազուկն որոյ հարուածոց ներքև այնպէս չարաչար ճըմլուած էր ինքն։ Մեծ Պետութեանց դէպի Հայս կացքին ու վերջնական որոշման մասին անհանգիստ ու կասկածոտ, Բ. Դուռն հաւանեցաւ որ Պատրիարքարանն յղէ պատգամաւորութիւն մի Պէռլին և ներկայացուցէ համեստ ծրագիր մի բարեկարգութեան։

Բայց այն վայրկեանէն երբ Պատրիարքարանն յուսախաբ եղաւ և պատգամաւորութիւնն ձեռնունայն և վշտամած վերադարձաւ, Բ. Դրան երկիւղը փարատեցան և տրամադրութիւնք բոլորովին փոխուեցան։ Եւրոպայի թոյլ, գրեթէ պղտոնական համակրութիւնն դէպ ի Հայս՝ Դրան համար յայտնութիւն մ'եղաւ, եւ յիրաւի քաջալերիչ յայտնութիւն մի։ Ի՞նչ, Քրիստոնեայ Եւրոպա չուզեր տայ քրիստոնեայ Հայոց ինչ որ ինքն մահմետական Թուրքն պատրաստ էր տալու եթէ պահանջէր Վեհաժողովն ... ուրեմն կրնայ Դուռն համարձակօրէն վարուիլ և պատժել այն Հայ ժողովուրդ զոր պաշտպանեց Եւրոպա։

Այս չարախոհ տրամաբանութեան համեմատ Դուռն կարգադրած է իւր հակահայ քաղաքականութիւն, զոր մեծ փութով ի գործ կը դնէ յայնմ հետէ։ Ոչ Ռուսն, ոչ Անգլիա և ոչ ուրիշ Պետութիւն լուրջ արգելք յարուցած է Դրան կատաղի և անյագ վրէժխնդրութեան դէմ։ Ուստի և սա 61դ յօդուածն իսկ մեռեալ տառ ճանաչելէն ի վեր սկսած է նորա իւրաքանչիւր նախադասութիւն ի գործ դնել հակադարձ իմաստովն։ Որպէսզի Քրդեր կարենան չարունակել իրենց հարստահարութիւն աւելի ազատօրէն, տուաւ նոցա զինուորի դիմակ։ Որպէս զի Պէկերն մինչև իսկ եւրոպական լրագրութեան աղմուկն և դեսպանաց բողոքն արհամարելով չարունակեն իրենց քստմնելի բարբարոսութեանց մէջ, արձակեց զՄուսա Պէյ։ Որպէս զի կրթութեան գործն խափանէ, բանտարկեց, աքսորեց կարող վարժապետներ և առաջնորդներն։ Որպէս զի հարստահարութիւնք անպը-

տուղ չլինին օսմանեան գանձուն և պաշտօնէից քսակին համար, ձեռք առաւ Հայոց հարուստ դասակարգն և աներևակայելի ամբաստանութեամբք հազարաւոր ոսկիներ առաւ։ Եւ որպէս զի զՀայս ապստամբ նկատէ ու պատժէ, չնչին, աննշան խլրտման կամ երկչոտ բողոքոյ մի կուտայ չափազանց ահագին կերպարան, կեղծ մեկնութիւններ, և կը սկսի անմեղներու բազմութեամբ ընուլ բանտերն։ Պարզ աղերսներն, օրինական խնդիրներն իբրև յանցանք կը պատժէ խստութեամբ, և ա՛նպիսի խստութեամբ և անիրաւութեամբ որ Հայեր ստիպուին անհամբեր խլրտումներ ընել և ինքն զնոսա ամբաստանէ իբրև ապստամբ։ Կեղծաւորապէս կըսէ թէ Հայեր ապստամբ են, և ի ծածուկ կը սրտմտի որ Հայեր այնքան համբերատար լինելով չեն ըներ այնպիսի շարժումներ զորս կարենայ Եւրոպացւոց ներկայացունել իբրև յայտնապէս ապստամբական։

Կայ նաև աւելի դիւաշունչ հնարք մի։ Թուրք ժողովուրդն յեսին ասոիճան տգէտ լինելով՝ կրնայ դիւրաւ հաւատալ ամեն այլանդակ ստութեան։ Ի հաշիւ առնելով ուրեմն խուժանին տգիտութիւնն և դիւրավառ մոլեռանդութիւնն, կառավարութիւնն ամեն ուրեք կը հնարի հաւատալ տալ մահմետականաց թէ Հայք զէնք և ռազմամթերք պատրաստած ունին և օր մի յանկարծ պիտի ջարդեն զիրենք։ Տեղական իշխանութեանց այս գաղտագողի ներշնչման բուն ծագումն անշուշտ Բ. Դռնէն է, և Դրան ներքին դիտումն կը թուի լինիլ թուրքընդհայ յարաբերութեանց այնպիսի վիճակ մի պատրաստել որ վերջապէս Թրքեր ընդհանուր և ահագին կոտորած մի տան Տաճկահայոց։ Այս կերպիւ կը յուսայ բիւրաւոր «կեավուր»ներէ ազատել երկիրն և միանգամայն չքմեղել ինքզինք Եւրոպայի առջև ըսելով թէ տգէտ խուժանն ըրաւ զայդ՝ գրգռուած լինելով Հայոց կասկածելի ան հարդարութենէն։

Այդ մեծ կոտորածի մասնակի փորձեր կատարուած են արդէն, որոց գլխաւորն եղաւ Կարնոյն։ Յայտարարութեանց դէպքէն յետոյ ալ, եթէ մեր Թղթակցի լուրերն ստոյգ են, Թուրքք Կեսարիոյ մէջ Շուկաներ կողոպտած և բազում Հայեր նեղած ու սոսկացուցած են շատ քաղաքաց մէջ։ Կառավարիչք գուցէ կը բաղձային Կարնոյ կոտորածն Սեբաստիոյ և Էնկիւրիի բոլոր քաղաքաց մէջ կրկնուած տեսնել յայտարարութեանց առթիւ, և եթէ վերջապէս իմացուի թէ նոյն իսկ կառավարութեան հրահանգաց համաձայն կամ նորա լրտեսներու ձեռքով այդ յայտարարութիւնն այդքան քաղաքաց մէջ մի և նոյն օր փակցուած էին, մեք բնաւ չպիտի զարմանամք...

Ա՛յդքան վատթարացեր է Թուրք կառավարութիւնն և ա՛յդքան ահաւոր վըտանգօք շրջապատեալ են Տաճկահայք։

Գ

Այս եղելութիւններ ոչ միայն ոսոկալի են ինքնին այլ և ահաւոր են յոյժ իբրև շարագուշակ նշանք ապագային համար։

. . . . . .

Մեք Հայերս եթէ չենք սոսկար և եթէ ամեն միջոց լրջօրէն ձեռք չենք առնուր, պատճառն մեր տգիտութիւնն է։

Մեք այնքան տգէտ ենք որ լուրերն իբրև լուր կը կարդանք՝ առանց նոցա ընդարձակ նշանակութիւնն ըմբռնելու, առանց յետից ցգլուխ սարսափելու։

Մեր գաղջ զգացումներ, մեր թոյլ շարժումներ նշան են թէ Տաճկահայոց վիճակն չեմք հասկնար լիովին, և ոչ ալ թուրք կառավարութեան խորամանկ և շարանենդ ընթացքին բոլոր ահաւորութիւնն։

Բ. Դուռն զմեզ խաղալիկ դարձուցած է, մեր հայրենասիրութիւնն կը հեգնէ, մեր կազմակերպութիւններ կը ծաղրէ, մեր թերթեր կ'արհամարհէ, և մեր Ազգին մէջէն ամեն բարոյական ու նիւթական կարողութիւն սպաննելու կամ անօգուտ գործելու կ'աշխատի ծայրագոյն ճարտարութեամբ, և մեք նստեր ունայն խօսքերով ժամավաճառ կը լինիմք։

Մեր բոլոր խօսքեր, հրատարակութիւններ, ընկերութիւններ ի՞նչ են բաղդատմամբ այն ահագին ուժին և աներևակայելի չարանենգութեան որովք Բ. Դուռն կը ճմլէ և կը մտադրէ սպաննել մեր Ազգ։

Մուսա Պէկի դէմ կը գանգատէինք բայց նա Ֆիւրդ մ'էր, և կեդրոնէն հեռու գտնուող հայ գիւղացւոց վերայ կը կա-

տարէր իւր խժդժութիւններ։ Այժմ մեծ քաղաքաց մէջ, և նոյն իսկ Կ. Պոլսոյ մէջ ամեն կարող և զգայուն Հայու գլխուն վերայ կախուած կը մնայ սուրն։ Ո՞վ չարաչար վախճան տուաւ Յակոբ Փաշա Գազազեանի. կը հաւատա՞ք թէ իրօք անբան շներ յարձակեցան նորա ձիու վերայ...։ Ո՞վ եղաւ դահիճն Խորէն եպ. Նարպէյի, կը հաւատա՞ք թէ նա մէկ աւուր մէջ հիւանդացաւ ու մեռաւ բնական մահուամբ...։ Ամեն կառավարիչ Մուսա Պէկ մ'է դարձեր և բովանդակ թիւրք կառավարութիւնն կը ծառայէ իբրև թէ Հայերն սպառելու համար յատկապէս յօրինուած կազմակերպութիւն մի լինէր։

Անլուր և մի քան զմի աւելի անհանդուրժելի անիրաւութիւններու անընդհատ շարքով գրգռեց ու գգրգռեց Հայ հպատակներն և սպառեց ոմանց համբերութիւնն, և այժմ ալ կ'ամբաստանէ զայնս իբրև յեղափոխական կամ իբրև ապստամբ։

Միթէ հնա՞ր էր որ Հայեր մեռելատիպ համբերութեամբ և անմռունչ տանէին այդ կազմակերպեալ խժդժութեանց — ո՛չ, ազգին այժմու կրթական աստիճանին մէջ չէր հնար որ ամեն Հայ կարենար տանիլ այդմ։

Պիտի շարունակուի այդ ընթացք — ոմանք ազնիւ անհամբերութեան նշաններ ցոյց պիտի տան բնական ելմի բերմամբ, և թուրքն զայնս պատրուակ պիտի ընէ Ազգն շարչարելու։

Բայց կ'երևի թէ կան ոմանք ալ որ կ'աշխատին արուեստական, անբնական, անդէպ ցոյցերու մղել զժողովուրդն, անգոյ ուժի և անյօդ կազմակերպութեան կեղծ ցոյցերով կասկած ներշնչել կամ գոնէ պատրուակ հայթայթել կառավարութեան— ահա այդպիսիք են մեղադրելի, յոյժ մեղադրելի։

Մեզ հարկաւոր է Ազգին գլուխ դընել զարժանաւորն, ընկերութեանց վարիչ կարգել գկարողն, լուսամիտ և իմաստուն հայրենասիրութեամբ ներշնչել զերիտասարդութիւնն, մեր անսարբեր հարուստներուն ու յուսահատ դիւանագէտներուն համակրութիւն ներշնչել դէպ յԱզգն, և բոլոր Ազգին իմացական, նիւթական և ֆիզիքական ուժերն համերաշխ և պատշաճաւոր կազմակերպութեան վիճակի բերել որպէս զի զօրենք թշնամւոյն խելքին և միջոցներուն դէմ դնել աւելի խելօք մարդեր և իմաստնագոյն միջոցներ։

Ո՛ Հայրենասէրներ, մինչև ե՞րբ պիտի շարունակենք այսպէս գաղջ և թոյլ մնալ. մինչև ե՞րբ պիտի յուսանք պարզմտօրէն թէ ինչ որ կը կատարեն այժմ ոմանք, է այն ինչ որ պարտ կամ հնար է ընել Ազգն փրկելու համար։

ՄՈԼԵԳՆԵԱԼ ԽՄԲԱԳՐԻՆ

«Հայք»ի ընթերցողք գիտեն թէ որքան կը գարշիմք մեք պայքարի այն ստորին տեսակէն որ պժգալի արատ մէ լրագրութեան, և մեծ անարգանք ընթերցողաց։ Կրնան յիշել նաև մեր գոհունակ յայտարարութիւն ի վախճանի անդ նախորդ տարեշրջանի՝ թէ հանրային ողջմտութեան վերայ վստահ՝ պիտի շարունակեմք հաստատ մնալ մեր կռուախոյս ուղղութեան մէջ։

Հայ հանրութիւնն որ գոհութեան ցոյցերով քաջալերեց «Հայք»ի ընթացքն, աննուղղակի բայց ազդու դաս մի տալ ուզեց մասնաւորապէս այն խմբագրին որոյ կռուասէր բնազդմունք այնքան կարօտ էին սանձահարման, և սակայն, աւա՛ղ ի Մարսիլիա հրատարակուող թերթիկն՝ անուղղայ և արհամարհոտ՝ զմեզ ի վէճ գրգռելու ջանքերն կրկնապատկեց, և երբ տեսաւ թէ իւր սովորական և արտասովոր խծբծանաց ոչ ինչ պատասխան կուտամք և կամ վեհանձն լռութեամբ միայն կը պատասխանեմք, հերքման ամեն երկիւղ թօթափելով ժպրհեցաւ մեր անցեալ գործունէութեան մասին այնպիսի հրեշակերպ սուտեր կարկատել ու հրատարակել որոց պատասխանել հարկ ի վերայ կայ մեզ, ո՛չ զստայօղն խայտառակելու հաճոյքին համար այլ հանրային կարծիքն չինելու նպատակաւ, քանզի մեր նախանձաբեկ հակառակորդին վերջին զրախօսութիւնք այնպիսի յանդուգն տեսակ, են որոց առջև ողջամիտ ընթերցողք անգամ կրնան շփոթիլ։ Այդպիսի դէպքի մէջ մեր լռութիւն պիտի լինէր դատապարտելի զանցառութիւն։

Ահաւասիկ թէ Մարսիլեան թերթիկն

ինչ վիթխարի խոշորութեամբ սուտեր կ'արտաբերէ մեզ դէմ իւր 53րդ թուոյն խմբագրականում

«Ամերիկայի մէջ հրատարակուող մի հայ լրագիր» կ'ըսէ, «որի խմբագիրը Կիլիկիայի Հայերին մէջ բողոքականութիւն տարածելու համար քարոզչութեամբը և Կ. Պոլսի մէջ ալ ամերիկացի միսիոնարների Աւետարեր թերթին մէջ հայ եկեղեցականութեան դէմ գրած յօդուածներովն ծանօթ և նշանաւոր մի անցեալ ունի ...»

Այդ խօսքեր, երբ կարդացինք, յիրաւի թուեցան մեզ լինել մոլեգնեալի ուրուն խօսքեր:

Ուրիշ շատ անյարմար ու անհեթեթ բաներ կան մեզ դէմ գրուած նոյն յօդուածի մէջ և նոյն թերթին բազում թիւերուն մէջ, բայց անոնք ուրիշ կարգի խեղաթիւրումներ են. Օրինակի համար օտարական թղթակից մի անցեալ տարի Վանէն գրած էր մեզ նոր Վալիին նկատմամբ թէ «ճիշդ կարգապահութեան և վարչային կարողութեան տէր մի մարդ կ'երևի:» Այս խօսք քաջքշուած է մեր հակառակորդի կողմանէ ամեն արգամ որ Վանէ լուր հրատարակած է հարստահարութեանց, և ջանացած է հասկցունել թէ «Հայք» Թուրք կառավարութեան անօրէն պաշտօնէից պաշտպանն է՛՛: Նախ, չի մտածեր թէ այդ թերթակցութիւն մ'է, և թէ թղթակիցն կրնայ խաբուած լինիլ: Երկրորդ չյիշեր թէ նոր վալիներն առջի մի քանի ամսոց մէջ յաճախ արդարասէր և կարգասէր երևիլ կը ջանան և բնիկները անգամ կը պատրեն: Վերջապէս չդիտեր թէ թղթակիցն իւր տպաւորութիւնն յայտնած է ոչ թէ համոզում, «կ'երևի» ըսած է, ոչ թէ «է»: Բայց մեր հակառակորդ խմբագիրն անկարող է այդպիսի տարբերութիւններ դիտելու, քանզի գիտական կրթութենէ և ճշդասէր դիտողութենէ զուրկ թերուս մարդ մ'է, և երբ մանաւանդ կրիւք կուրացած լինի, բոլորովին անկարող կը գտնուի բացատրութեանց երանգներն տեսնելու:

Այս տեսակ խեղաթիւրման նշանաւոր օրինակ մ'ալ 53րդ թուոյն մէջ կը գտնենք սապէս.— «Այդ ճիզվիթական թերթ,» կըսէ, «Հայք»ի համար, «իւր վերջին թուով ալ (Փետր. 1) չենք գիտեր ինչ նպատակաւ, մի բոլորովին սուտ լուր տարածած է Վեհ. Մկրտիչ Խրիմեան Կաթողիկոսի մասին, հրատարակելով թէ վախճաներ է:» Մեր Կ. Պոլսոյ թղթակցին նամակին մէջ ըսուած է թէ «մէկ երկու օրէ ի վեր չշունչ մը կը շրջի մայրաքաղաքիս մէջ թէ Հայոց Հայրապետ Խրիմեան Հայրիկ վախճանած է:» Եւ նամակին բոլոր ընթացքին մէջ գործածած է «կ'ըսուի թէ» «կը պատմեն թէ» «կը կարծեն թէ» «աւելի հաւանական է» ևն. բացատրութիւններն: Մեր թղթակից, ի սի բան, հաղորդած է ոչ իբրև ստոյգ լուր այլ իբրև «չշունչ» ինչ որ հաղորդած է, և «չշունչն» ունի իր կարևորութիւն: Մեր Հայրապետի մասին մայրաքաղաքին մէջ շրջող այնպիսի «չշունչ» մի լսել կ'արժէր: Մեր թղթակից յայնժամ դատապարտելի կը լինէր երբ չշունչն շրջած չլինէր, այլ ինքն ստեղծած լինէր զայն, և մեք ալ, այդ պարագայի տակ, ոչ թէ դատապարտելի այլ դժբաղդ պիտի սեպուէինք իբր անպարկեշտ թղթակցի հանդիպած խմբագիր: Դատապարտելին միշտ և յամենայն դէպս մեր հակառակորդն է որ պարզապէս «վախճաներ է» ի կը փոխէ «չշունչ մը կը շրջի թէ ... վախճաներ է» խօսքն --և տարբերութիւնն երկու խօսքերուն միշտ ահագին է տեսնելու աչք ունեցողին համար

Ի շինութիւն մեր ընթերցողաց կ'ընեմք այս դիտողութիւններ ոչ թէ յուղղութիւն մեր հակառակորդին, որոյ խիղճ ամենայն փափկութիւն կորուսեր է և անընդունելի խոշորութեամբ սուտեր յղանալով յոշնչէ յինչ կը բերէ առանց գոնէ սկզբնական չամանթաղ մ'ունենալու յորմէ կազմէր զայնս խոշորցունելու և խեղաթիւրելու արտակարգ տաղանդին շնորհիւ:

Եւ յիրաւի, ո՞ր եկեղեցւոյ կամ ո՞ր ժողովրդի քարոզիչ եղած եմք.— Աւետարերի ո՞ր տարւոյն և ո՞ր թիւերուն մէջ գրած եմք հայ եկեղեցականութեան դէմ որ ոչ մեք գիտեմք և ոչ ալ աշխարհ, այլ միայն իրեն տրուած է գիտնալ:

Այն զոր մեք գիտենք և զոր կրնամք ի լուր աշխարհի յայտարարել, այն է թէ

Մեք ԵՐԲԷՔ քարոզչութիւն ըրած չունինք,

Եւ ԵՐԲԷՔ Աւետարերի մէջ հայ եկեղեցականութեան դէմ յօդուածներ գրած չեմք:

Սկ ընթերցողաց կը մնայ գտնել թէ

հակառակորդն ինչ հաշիւներով կամ ինչ կրիւք զգլխեալ գլուխներ է այդ սուտեր կարկատելու անդնդախոր փորձանաց մէջ։

Այդ սուտեր այնքան աւելի յիմարական են որքան դժուարին է ցուցնել թէ մենք մոլեռանդ ոմն եղած լինիմք՝ բողոքականութիւն ծաւալելու նուիրեալ։ Մեր անցեալ գործունէութեան մէջ եթէ «ծանօթ և նշանաւոր» եղած եմք ո և է կրօնական խնդրոյ մասին, այն ալ ոչ թէ բողոքականութիւն ծաւալելու, այլ գրոյ բողոքական Հայոց դէպ յազգային եկեղեցի միտեցուցնելու համար մեր հրատարակութեանց առթիւ եղած եմք։ «Հայ բողոքականութեան Անցեալն ու Ապագայն» անունով մեր աշխատասիրութիւն որ նախ «Արևելք» լրագրին մէջ և ապա առանձին տետրակի ձևով հրատարակուեցաւ 1888 ին և Թուրքիոյ ամեն կողմ տարածուեցաւ, բաղմաց ծանօթ է և մեր հակառակորդին ևս ծարօթ է, զի անոր նկատմամբ նպաստաւոր կերպիւ խօսած է յայնժամ իւր թերթի մէջ։ Այն ատեն «Աւետարեր» բուռն պայքար բացաւ մեզ դէմ և շատ բողոքական քարոզիչներ յարձակեցան մեր վերայ, որոց ի պատասխանի յօդուած յղեցինք «Աւետարեր» ի, բայց չհրատարակուեցաւ այն առարկութեամբ թէ Թուրք Գրաքննութիւնն արգիլած է։

Ճշմարիտ է թէ մեր վերոյիշեալ գործոյ մէջ տրամաբանութեան ոյժ գործածած եմք և ոչ թէ նախատինք ու յիմարական խծբծանք։ Փաստիւք խորհուրդ տուինք Հայ բողոքականաց թողուլ զՀայկական ուղղութիւն յոր ինկած են միսիոնարաց առաջնորդութեամբ, և զգուշացած եմք հետևելէ վիրաւորիչ եղանակին այն մի քանի մոլեռանդ սիմարաց, որք, Պոլսոյ միսիոնարաց հացն ուտող խումբ մի բողոքականաց նայելով՝ յա՛յն յախուռն և հակատրամաբանական ընդհանրացումն յանգած են իբր թէ բողոքականք շահու համար մայրենի եկեղեցիէն բաժնուած լինէին։ Պէտք է գիտնալ թէ Թիւրքիոյ Հայ Բողոքականք առ հասարակ ծանր ծախուց ներքև մտած են գիտութեամբ և կամովին, և իրենց վարժարանաց և եկեղեցեաց մասակարարութեան համար՝ համեմատութեամբ իրենց փոքր Թուոյն՝ եռապատիկ կամ չորեքպատիկ աւելի հանրային տուրք կը վճարեն քան զԼուսաւորչականս։ Ոչ միայն յայտնի իրողութեանց հակառակ այլ և Ազգին համար անպատուաբեր է ուրեմն այն կարծիք թէ 30 հազար Հայեր շահու համար բողոքական եղած են։

Աղատամիտ և դիտող հայրենասէրն կը յարգէ բողոքական և հռովմէական Հայոց կրօնական համոզումներն և փոխանակ ջանալու որ մի քանիներ վերադառնան ի հայ եկեղեցին, կ՚աշխատի բովանդակ բողոքական ու կաթոլիկ հայ դանդուածներն միտեցուցնել դէպ ի մայրենի եկեղեցին և խմորել զնոսա հայրենասիրական ոգւով։

Այդ եղած է և պիտի լինի մեր ևս ջանք, որքան ալ Բողոքականք ոմանք կամ Լուսաւորչականք ոմանք թերանան զմեզ հասկանալէ առ այժմ։ «Հայ Բողոքականութեան Անցեալն ու Ապագայն» աշխատասիրութեամբ ապաքէն դժպհի եղանք միսիոնարաց և հին Բողոքականաց շատերուն, բայց մեր նպատակ յաջողութեամբ պսակուեցաւ, քանզի հայ բողոքական երիտասարդութիւնն, ուժգին, թէև յարդալիր, դատ մի առաւ եկեղեցական խնդրոց վերայ հայաբար խորհելու։

Մեր ուղղութիւն նոյն եղած է միշտ։ Ցիշեալ հրատարակութենէն 10 տարի առաջ ալ, 1879ին, երբ Սանթապի Հայ-Ամերիկեան Գոլէճին հայկաբան ուսուցիչն էինք, «Աւետարեր» ի մէջ յօդուած մի հրատարակեցինք և ճմլիչ ապացուցութեամբ դատապարտեցինք այն ամերիկացի միսիոնարներ որք Զէյթունի, Հաճընի Մարաշի նման հայախօս քաղաքաց Բողոքականներուն ոսվրեցուցած են տաճկերէն լեզուն գործածել իրենց կրօնական պաշտամանց համար և այսպէսով գրեթէ մոռցուցած են հայերէնն։ Այդ յօդուածի անմիջական արդիւնք այն եղաւ որ մեք ստիպուեցանք հրաժարիլ մեր ուսուցչական պաշտօնէ։

Մեր սկզբունք միշտ և ամեն ուրեք եղած է ճշմարիտն խօսիլ ու ճշմարիտն հրատարակել՝ առանց մեր անձնական շահուց խորհուրդ հարցնելու։

«Հայք» ի մասին պէտք է գիտնալ որ այն «ոչ Լուսաւորչական, ոչ բողոքական, և ոչ էլ կաթոլիկ լրագիր է»։ «ՀԱՅԲ» Ը ԳԵՐԱԶԱՆՑԱՊԷՍ ՀԱՅՈՑ ԼՐԱԳԻՐ Է։

Իսկ Մարսիլեայի թերթիկն իւր վերջ-

նական կործանումը կը փութացնէ այդ-պիսի զրախօսութեամբ, և մեծապէս կը սխալի կարծելով թէ իր կուսակցութեան պատկանող լուսամիտ անհատներ կրնան միշտ խաբուիլ իւր ճիզվիթութենէ։ Մեք իրաղէկ եմք որ Հ. Հ. Միութեան անդամներէն անոնք որ իրօք ողջամիտ և հասկացող մարդիկ են, սկսած են հետզհետէ աւելի տեսնել իւր իսկական դոյն և ոգի, և շատ յոյս ունիմք թէ այնպիսիք ուշ կամ կանուխ ազնիւ զայրութի շարժմամբ մի պիաի խզեն իրենց համակրական յարաբերութիւն այնպիսի խմբագրի մի հետ որ զիւր թերթ անձանկան հաշիւներու և անմիտ շարախօսութիւններու գործի ըրեր է, մինչ այնքան կարևոր խնդիրներ կը մնան դանց առնուած, և մինչ միլիոնաւոր տաճկահայք սոսկալի հարստահարութեանց տառապանքի մէջէն շուարեալ աչքեր կը դարձուցեն դէպ արտասահմանի հայ գործիչներն . . . ։

Վա՜յ մեզ . . . ։

ՄԵՐ ԳՈՐԾ

ԵՒ ՉԱՅՆ ԳՈՐԾԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՆ

ԹԷ ԿԱՐՕ՞Ղ ԵՄՔ ԱՐՏԱՔԻՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Մեր ազգի մէջ կարգ մի մարդիկ կան որոց համար՝ մեր գործ սպասել պէտք է լինի առանց բան մը ընելու։ Այս մէկ ծայրն է, իսկ միւսն անոնցն է որք կը կարծեն թէ ամեն ինչ կրնան ընել, երազել, ցնորել, բաջաղել և յախուռն քակել քայքայել, զարնել ու ջարդել։ Սոցա համար մեր նպատակ պէտք է լինի Հայրենեաց մէջ քրիստոնեայ կամ մանաւանդ հայ կառավարութիւն մը հաստատել։ Օսմանցիք մի քանի դար իշխեցին, քիչմ՚ալ մենք պէտք է իշխենք։ Մենք ոչ մէկ ոչ միւս ծայրայեղութեան կը պատկանիմք։ Հայրենեաց մէջ գործ մ՚ունիմք կատարել։ Բայց այդ գործ զարնել, ձգել քակել քանդել չէ։ Ինչ է ուրեմն մեր գործ —մեր գործ է Հայրենիքն ազատել իւր այժմու քայքայեալ վիճակէն և անցունել զայն քաղաքակիրթ ազգաց և երկիրներու կարգն։ Եւ առ այս միակ միջոցն է ազգն ու հայրենիք բարեկարգելով՝ քաղաքակրթական սկզբանց տէր ընել զայնս։

Մի գուցէ կարծողլինի թէ այսու ժխտել կ՚ուզեմք բարեկարգութեան համար արտաքին օգնութեան պէտքն։ Մեր գործ երկու երես ունի—ներքին և արտաքին։ Արտաքին երեսին կը վերաբերի եւրոպական պետութեանց միջամտութիւնն։ Նոքա կրնան Թուրքիոյ անդարմանելի վիճակէն ձանձրանալով այլ ևս չհանդուրժել որ այս ԺԹ դարու մէջ այսպիսի բարբարոսութիւնք շարունակեն և ըսել թերքին Այդչափդ բաւական է, կամ ըստ բացատրութեան կլասոթքնի, աղխ ու մաղխ առէք չուեցէք դա տեղէն։ Այս բանը հընարաւոր է։ Նաև անուրանալի է թէ բռնութիւնն վերցունելու համար բռնաւորն պէտք է բառնալ ի միջոյ։

Բայց կարեւոր կէտ մը կայ որուն կը հրաւիրեմ բարեկամաց ուշադրութիւնն—այսպէսով հայրենիքը բռնաւորաց ձեռքէն ազատուած կը լինի՞։ Մեծ հարց մի կ՚ելնէ ասա մեր առջև, այն՝ թէ ո՞վ պիտի իշխէ երբ Թուրքն ոչ ևս իշխէ։ Մանաւանդ ով պիտի լինի քաղաքակրթութեան առաջնորդ և զանազան ժողովրդոց ու ցեղերու ազնիւ խմորիչն։

Շատ պարզմտութիւն կ՚ենթադրէ ոմանց այն համոզումը թէ կարգ մը պաշտօններու և պաշտօնէից փոփոխութիւնը ինքնին բարեկարգութիւն կը լինի· իբր թէ Օսմանի տեղ Օհան, Եագուպի տեղ Յակոբ, Իպրահիմի տեղ Աբրահամ դնել ինքնին բարեկարգութիւն նշանակէր։ Իրաց բունը փոխել պէտք է ոչ թէ միայն անունը։ Եթէ մեր նպատակն է բարեկարգութիւն, կարօտ եմք բարեկարգիչներու, եթէ արդարութիւն կը խնդրեմք, պէտք են մեզ արդարադատներ, եթէ իրաւունք՝ իրաւաբաներ։ Սոցա ոչ անուանականն կամ երեւակայականն այլ իրականն պէտք է մեզ։ Եթէ անուանք ու ճառա ոանք բաւէին, աւելի քան բաւական արդէն ունէինք·— արդարութեան վրայ կոկոզաբանող օրէնսդրութիւն, հաւասարութեան վրայ պնդող կանոններ ու հրովարտակներ չեն պակսիր,— խնդիրն այդ մեռեալ տառերու կեանք և իրականութիւն տալու վերայ է։

Ցայսմ յաջողելու համար պարտիմք ամեն ճիգ թափել Ազգին մէջ մտքի լուսաւորութիւն և ոգւոյ բարձրութիւն յա-

ռաջ տանելու։ Ցեղափոխական աղմուկներու մէջ ոմանք գուցէ կը մոռնան թէ տակաւին ճշմարիտ է ինչ որ ամբողջ սերունդի մը աղաղակն եղաւ թէ մեզ հարկաւոր են վարժարանք։ Վարժարանք այո՛ անհրաժեշտ են, և մեք կ'ըմբռնենք վարժարանն աւելի որոշ և բարձր մտօք քան մեր անցնող սերնդեան տարտամ և այսօտ առումն։ ՄԱՐԴ պէտք է մեզ, և մարդ հասցուներլու միակ միջոցն է վարժարանն, որոյ օժանդակք են եկեղեցին կամ կղերն և մամուլն կամ հրապարակագրողք։

Վարժարանական կրթութիւն, կղերի ազդեցութիւն, մամլոյ գործունէութիւն այն պայմանաւ միայն բարերար են ազգին եթէ մտքի ճշմարիտ լուսաւորիչ և ոգւոյ ազնուացուցիչ լինին։ Ինչ որ անկօր է անհատին ալ այդ կրկին թեւեր, անկօր է զայն բարձրացուներլու։ Ոչ տգէտ բարեպաշտութիւն և ոչ գիտուն սատանայութիւն է մեզ փրկաւէտ, պէտք է ուղիղ սիրտ և մշակուած միտք։

Գուցէ ոմանք կարծեն թէ այսպէս խօսիլ օրը ծեծել է։ Բայց պէտք է լաւ համոզուիլ թէ ազգին ներկայ ձգտումներն չարաչար յուսախաբութեան պիտի յանգին եթէ առաջնորդք վրիպին ազգային փրկութեան բուն հիմերն դնելէ։ Եթէ պատմութիւնը բան մը կ'ուսուցանէ, այն ալ սա է թէ տիեզերաց օրէնքին և կարգաց համաձայն ընթացող ազգերն են որ ճշմարտապէս յաջողած են։ Ազգաց վարժանիչ պակասութիւնն այն եղած է միշտ որ կա՛մ չեն կրցած ըմբռնել այդ օրէնքներ և կամ ըմբռնած այլ յարգած չեն զայն։ Այսօր ևս ազգաց վերայ դիւրեն է տեսնել զայս։ Այդ օրինաց արդեամբ է որ կը կործանի օսմանեան պետութիւնն։ Ո՛վ որ ինքզինք բացառութիւն համարի, կը սխալի չարաչար։ Թերեւս կարենամք օսմանեան իշխանութենէն աղատիլ կերպիւ իւիք, այլ անհնար է որ բարգաւաճիմք եթէ մտամք տգիտութեան և բարոյական ախտաւորութեան մէջ։ Ազատութի՞ւն կը խնդրենք — արդարութեամբ չգործածուող ազատութիւնը անկարգութիւն է։ Նիւթական զարգացման միջոցնե՞ր կը խնդրենք— արդար և ուղիղ միջոցներով ձեռք չբերուած հարստութիւնն իրար կործանելու, վրէժխնդրութեան գործի և ապականութեան միջոց միայն կը լինի։

Վարժարանաց և ներքին մշակութեան հոգ տանելու արգելքներ կան, և այդ արգելքներն առարկելով ոմանք կը պնդեն թէ կրթական գործն յառաջ տանիլ անկարելի է այլ ևս։

Այդ արգելքներու խստութիւնն աչքի առջև ունենալով իսկ՝ կ'ըսեմք թէ բաղդաւորէն աւելի դիւրին է կրթութիւնն յառաջ տանիլ Ազգին մէջ քան թէ Եւրոպացւոց միջամտութիւնն գրգռել ի նըպաստ մեր ազատութեան։ Պէտք է նկատել թէ կրթական գործին արդէն շատոնց ձեռնարկած է ազգն և կարգ մի դժուարութեանց յաղթած է։ Այսօր գրեթէ ամեն աստիճանէ ու տեսակէ, արական և իգական սերնդոց դաստիարակութեան ծառայող դպրոցներ ունիմք։ Շատերու ուշադրութենէն վրիպած կարեւոր կէտ մ'ալ կայ, այսինքն թէ մեր կրթական գործոյն համար Եւրոպայէն օգնութիւն ստանալ աւելի դիւրին է քան քաղաքական գործոյն համար։ Եթէ չենք սխալիր, Անգլիայէն կարեւոր գումարներ են հայթայթուած Միացեալ Ընկերութեանց գանձուն։ Եւրոպացիք մեզ հրացան և թնդանօթ, վառօդ ու ռազմամթերք չեն տար, բայց վարժապետ, գիրք, լրագիր, կրթական միջոցներ հայթայթելու կրնան համոզուիլ։ Եթէ արժան է որ ազգային հըպարտութեան թելադրութեանն անսամք, աւելի մերժելու ենք թնդանօթներու օգնութիւնն քան թէ կրթականն։

Չմոռնանք նաև թէ այն ներքին յառաջդիմութիւն զոր իրագործած է Ազգը 30—40 տարիէ ի վեր, իրագործած է օսմանցւոց դանազան արգելքներուն հակառակ, տեսակ մի բռնութեամբ և ուժով։ Կառավարական տհաճութեան հետ արգելք էր նաև Ազգին մեծ մասին անյօժարութիւնն ու անտարբերութիւնն դէպ ի կրթական գործն, այժմ ներքին արգելք ներն գրեթէ վերցած են, և ուսման սէրը աւելի տարածուած և ուսումնականք բազմացած են, և պարբերական մամլոյ հանգամանքն զգալապէս բարձրած։

Վերջապէս դիտելի է նաև այն թէ Եւրոպացւոց առջեւ հանելու երկու տեսակ խնդիր կայ մեզ համար, որոց մին շատ աւելի օրինաւոր է և ուշադրութեան կրնայ արժանանալ քան միւսն։ Եթէ աղաղակենք յունկն Եւրոպացւոց որ գան մեզ փրկեն Թրքին ձեռքէն և տան մեզ

ազատութիւն և իշխանութիւն, նոքա անտարբեր կը մնան եթէ չծաղրեն իսկ զմեզ։ Բայց եթէ մեք մեր կրթական գործին ոյժ տամք և կառավարութիւնն արգելու,—եթէ մեր վարժարանաց և եկեղեցեաց տէր լինելու ճիգ թափելով տեսնեմք թէ օսմանցիք կ'այրեն մեր վարժարաններ, կը փակեն մեր գրատուններ, կը խափանեն մեր կրթական հրատարակութիւններ, կ' արգելուն մեր եկեղեցական ժողովներ, և այդ առթիւք բողոք բառնամք Եւրոպայի, յայտնի է թէ հանրային կարծիքն աւելի կը յուզուի և կառավարութիւնք աւելի կը ստիպուին ուշադրութիւն ընել մեզ։

Ի հուսկ բան՝ բարոյական զօրութիւնը, մտքի լուսաւորութիւնն հիմն է նաև նիւթական և քաղաքական զօրութեան։ Ազգային կառավարութիւն, կազմակերպութիւն, ոյժ և ազդեցութիւն պէտք է ծագին բարոյական մշակութեամբ պատրաստուած ժողովրդեան ծոցէն ոչ թէ դրսէն՝ օտարի առժամեայ և վաղանցիկ ձեռնտուութենէն։ Օտար օգնութեան լաւագոյն և քան զամենայն բաղձալի տեսակն այն է որ մեզ կը ծառայէ ներքին ճըշմարիտ ոյժ զարգացուելու։

ՆՈՐ ԲԱՆ ՄԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ

Կ. Պոլիս, Փետր. 8

Թուրքիոյ այսօրուան արհաւիրքն է այն հնարաւորութիւն թէ գուցէ հատարակ ժողովուրդն պիտի ոկոի ինքն իրեն համար մտածել։ Կառավարութիւնն իրաւունք ունի վախնալու թէ ժողովրդեան մէջ անհատականութիւնը կը զարգանայ՝ նկատելով Փոքր Ասիոյ ժողովրդեան մէկ խորհրդաւոր մաքմնոյն վերջին ցոյցն։ Յունվար 5ի գիշերն, Էնկիւրիի և Սեբաստիոյ գաւառաց գրեթէ ամեն քաղաքին ու գիւղին ոստիկանութեան կայարանի դրան վերայ յայտարարութիւն մի փակցուած էր թէ Սուլթանն բռնաւոր և յափշտակիչ մ'է։ Ընդ առաւօտն երբ զարհուրեալ ոստիկանք կը ճեպէին ի պալատ տանել զահաւոր թղթեանն, գտան թէ կառավարչին պալատն ևս պաճուճեալ էր նոյն մոլորեցուցիչ յայտարարութեամբք։ և ժողովուրդն իւր գործի կամ աղօթել յերթալն՝ տեսաւ նոյն թղթեր մզկիթներու և վարժարանաց դռներու վերայ փակցուած։ Քրիստոնեայք սարսափեցան այդ որմագրեր եկեղեցեաց դռներուն վերայ գտնելով։ Յայտարարութիւնք գրուած էին թրքերէն լեզուաւ, և ստորագրութիւնը էր «Օսմանեան ժողովուրդն։» Նոցա մէջ գործողութեան մղելու ոև է յորդոր չկար, այլ միայն կարծիք մի կը յայտնուէր և յոյս մի։ Բայց յաչս կառավարութեան ծանր նշանակութիւն ունեցող պարագայն այն է որ երկրին ընդարձակ մէկ մասին մէջ միահաղոյն եղած է արարքն։

Երկու գաւառաց բանտերն խռնեալ են կասկածի համար բանտարկեալներով։ Անցեալ տարի քաղաքական յուզման պատճառաւ բազում սոփթաներ մայրաքաղաքէն վռնտուեցան, և այժմանոնցմէ ոմանք, իբրև յայտարարութեան գործին մասնակից կասկածուելով, բանտ նետուած են։ Թուրք իշխանութիւնք կ'ըսեն թէ գործին մէջ անշուշտ կան մահմետականներն, բայց թէ մահմետական միտքն այնքան վարպետ չէ որ ընդարձակ նահանգի մի մէջ միասնական այնպիսի ցոյց մի ընելու դաղափարն յղանայ։ Քրիստոնեայ պէտք է լինի ուրեմն ծրագրի այդ մասն երկողն։ Ասա ի մայրաքաղաքիս՝ կառավարութիւնն կը պնդէ թէ գործին մէջ անշուշտ մատ ունին Հայերն։ Բազմաթիւ Հայեր ձերբակալուած են, և կ'ըսուի թէ ոմանք տանջանքի ենթարկուած են խոստովանելու համար իրենց մեղքը, և երկրին բոլոր այն մասին մէջ Հայերու տներն խուզարկուած են ապացոյց գտնելու համար, որ գտնուած չէ սակայն։

Նամակներ բացուած են, գաղտնիք գտնելու յուսով — քանզի թուրք պաշտօնեայք զայդ ընելու բնաւ չեն վարանիր, թղթակցութեան անբռնաբարելիութեան պատկառ կալ չափազանց բարձր փափկութիւն համարելով։ Եթէ ոև է մէկուն տունն գիրք գտնեն, զայն ալ մեղսակից կը համարին ընականօրէն։ Շրջիկ գրավաճառն պարտի ապացուցանել թէ ինքն չէ փակցուցած այն յայտարարութիւններ, ե թէ ոչ պարտի փոխել ի բանտի, քանզի մարդ մի որ կը խոստովանի թէ ինքն քաղաքէ ի քաղաք սովորաբար կը ճամբորդէ, ի բերանոյ իւրմէ յանցաւոր դատուած կը համարուի։ Տեղ մի աղօթքի

համար ժողովուած մարդիկ ոստիկանութեան կողմանէ յանցաւոր նկատուեցան. —փա՞ստ.— փաստն այն է որ դոքա մէկ սենեկի մէջ ժողովուած էին յայտարարութեանց փակցուած գիշերն։ Եթէ դոքա թղթերն փակցունելու կարգադրութիւն չէին ըներ, հապա ո՞վ կ'ընէր։ Ուրիշ քաքաղաքի մի մէջ մարդ մի, շարաղէտ գիշերուան առաւօտուն, թղթատուն գնաց նամակի փուլ գնելու, զինքը ձերբակալեցին։ Այս մարդ փուլ կը գնէր, ուրեմն քոմ գտնուածներն գործածած սպառած էր, և ի՞նչ բանի համար գործածած էր եթէ ոչ յայտարարութեան օրինակներն նախորդ օրն ուրիշ քաղաքներ յղելու։՝՝՝

Այս գործոյն հետաքրքրական մէկ արդիւնքն եղած է մահմետական ամբոխին ընդդէմ քրիստոնէից ցոյցերն յայլ և այլ քաղաքս։ Փետր. 1ին այրեցին Մարսուանի աղջկանց ամերիկեան նորաշէն վարժարանն։ Հաւատարմական հեռագրեր. որք ամեն կողմանէ տեղացին յարքունիս Փոտիշահին, երբեմն մահմետականաց զքրիստոնեայս ի միջոց բառնալու յօժարութիւն ալ կը յայտարարեն ընդ աղօս։ Ժամանակը ժգնաժամական է։ Կրնայ լինիլ որ գործն հետևանք չունենայ, սակայն ընդհանուր ակնկալութիւնն այն է թէ նոր և ընդարձակ խռովութիւններ գուցէ պատահին այնպէս որ Եւրոպեան Պետութիւնք ստիպուին մէջ մտնել։

Թուրքիոյ քաղաքական շփոթութեանց մէջ Հայոց չափազանց մեծ բաժին մի կ'ընծայուի։ Բայց Հայք, ամբողջ առնուած, հանդարտ ժողովուրդ մ'են, և կ'ուզեն աշխատասիրութեամբ հայթայթել իրենց հանապազօրեայ հացը։ Եթէ Թուրքիա կարենար ի միտ առնուլ թէ իւր շահեր կը պահանջեն զՀայերն յինքն քաշել և ոչ թէ իրմէ հեռացունել, նոքա բնաւ նեղութիւն չպիտի տային իրեն։ Հակառակ այն իրողութեան թէ Հայք ամենուրեք այնքան փոքրամասնութիւն են որ բնաւ պատճառ չկայ նոցա ծայրագոյն ջանքերէն իսկ վախնալու, Թուրք կառավարութիւնն կը վարուի նոցա հետ իբր թէ ինքնայնմիջական վտանգի լինէր նոցա մեքենայութեաց երեսէն։ Երիտասարդք պաշարուած են լրտեսներով։ Ոճրի ապացոյց կը համարուի նոցա ուսումն եւրոպական գրականութեան։ Հրէշազան գրաքննութիւն մի իւր բոլոր ապշութեամբ կը ծանրանայ նոցա գրչին վերայ։ Հասուն հասակի մարդիկ կը ձերբակալուին, կը դատուին ու կը դատապարտուին դպրոցական շարադրութեաց համար զորս գրած են երբ տակաւին ոճիր չէր համարուէր Թուրքիոյ բարեկարգութիւնն երազել — շարադրութիւններ զորս ոստիկանք աղտի դէզերու մէջէ երբեմն գտած հանած են։ Նոցա բնաջին հաւատարմութիւնն իրենց ծննդավայրն եղող հայրենեաց համար՝ բռնի կը մղուին ուրիշ հոսանքի մէջ։ Իրօք Թուրք կառավարութիւնն կ'ուզէ որ սոքա Թուրքիոյ դէմ յուզիչներ դառնան, որպէս զի զայնս ճմլելու պատրուակ ունենայ։ Այսու ամենայնիւ եթէ այսօր Թուրքիա մերժէր Հայոց դաստիարակութեան գործն խոչընդոտող օրէնքներն ու թոյլ տար որ մահմետականաց հետ հաւասար պայմանօք Հայրենեաց ծառայէին, այլ ևս հայկական յուզում չէր մնար, և բոլոր երկիրն աւելի հարուստ կը լինէր նոցա շնորհիւ։ Սակայն հնարաւո՞ր բան է Թրքին կոյր աչքը բանալ իւր ճշմարիտ շահերն տեսնելու։

(ԹՐԻՊԻՈՒՆԷՆ համառօտեալ)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

ԴՊՐՈՑՆԵՐ Կ'ՈՒԶԵՆ ՀԱՍՏԱՏԵԼ Ի ՀԱՅՐԵՆԻՍ

Շատ գովելի է Ամերիկայի Հայոց դպրոցասիրութիւնն։ Մեր հայրենակիցք իբրև գործաւոր չեն կարող մեծ դումարներ աւելցունել, բայց յօժար են իրենց համեստ քսակէն բաժին հանել հայրենեաց մէջ կրթութեան գործին օգնելու համար։ Խարբերդու չորս թաղերու վարժարանաց ի նպաստ Ընկերութիւն մի կազմեր են արդէն նոյն Քաղաքի պանդուխտներն այս երկրի մէջ։ Իրարու նայելով հետ զհետէ ուրիշներ ևս կազմեցին դպրոցասէր ընկերութիւններ։ Նորագոյնն է Մալաթիայի պանդուխտներու «Միածան Մելիտինէի» ընկերութիւնն, որոյ նպատակն է Մալաթիոյ մէջ վարժարան մի հաստատել Միացեալ Ընկերութեանց ձեռամբ։ Առ այս նպատակ 4000 տոլար պիտի գոյացունեն, որոյ800ն արդէն հանգանակած են։

թող ներուի մեզ հարցնել մեր դպրոցասէր հայրենակցաց թէ արդեօք Մալաթիոյ մէջ նոր վարժարան մի հաստատելու հարկ կա՞յ։ Արդեօք աւելի լաւ չ՞ըլլիներ որ եղածներէն մին ձեռք առնուն, և զայն զարգացուցեն։ Միացեալ ընկերութիւնք վարժարաններ բացեր են այնպիսի քաղաքաց և գիւղից մէջ ուր պէտքն անհրաժեշտ էր, կամ բնաւ վարժարան չըկար։ Արդեօք աւելի լաւ չէ՞ր լինէր 1000 կամ 4000 տոլարի հանգանակութեամբ մի պարզապէս օգնել նոյն համակրելի ընկերութեան որպէս զի անհրաժեշտ եղող վարժարաններէն, զորս արդէն հաստատեր է, մին կամ երկուքն բաց պահել կարենայր ելմտական ներկայ ծանր ճգնաժամին մէջ երբ վտանգ կայ որ իւր վարժարանաց ոչ սակաւք փակուին։

Հայրենասիրութիւնն չպահանջեր որ անպատճառ նոր բաներ ընեմք· պէտք է արդէն գոյ եղող համակրելի ձեռնարկներն քաջալերել և զարգացունել, մանաւանդ կործանման վտանգէն փրկել։

Մեր Ամերիկեան հայրենակցաց կողմանէ շատ լաւ բան կը լինի եթէ նոր նոր վարժարաններ բանալու փոխանակ իրենց դրամով օգնեն արդէն գտնուածներէն մին ճշմարիտ վարժարանի վիճակին բերելու։ Գրասեղաններ, աթոռներ, դրքեր, առաստաղ և մելան բաւական չեն վարժարան մի օգտակար ընելու— էական պէտքն է ՎԱՐԺԱՊԵՏ։ Դժբաղդաբար վարժապետն Դիոգինէսի լապտերով պէտք է փնտռել Թուրքիոյ մէջ։ Ռուսիոյ մէջ կան կարող հայ վարժապետներ որք եւրոպեան համալսարանաց մէջ ուսուցչութեան արուեստն մասնագիտորէն ուսած են, կարելի է անոնցմէ մին հրաւիրել Մալաթիոյ կամ Խարբերդի կամ այլ Տաճկահայ քաղաքի այս ինչ վարժարանին համար, պայման դնելով նոյն վարժարանի հոգաբարձութեան հետ որ դպրոցին տնօրինութիւնն լինի նոր ուսուցչապետին ձեռքն, և Ամերիկեան հայ ընկերութիւնն վճարէ այդ տնօրէն-դասատուի թոշակին մէկ մասն կամ մեծ մասն տարուէ տարի։

Նաեւ կարելի է ուրիշ մէկ ընկերութիւն մ'ալ կրնայ Ամերիկայի համալսարանաց միոյն մէջ կրթել իւր ծախիւք յուսափայլ հայ երիտասարդ մի, այն պայմանաւ որ յետ ընթացաւարտ լինելոյ՝ երթայ վարժապետել իրենց քաղաքի այսինչ վարժարանին մէջ, և ընկերութիւնն նիւթապէս նպաստէ նոյն վարժարանի ծախուց։

Ի միբան, այժմ մեր հայրենեաց մէջ նոր վարժարան բանալէ աւելի արդէն գտնուածներուն համար արժանաւոր վարժապետ հասցունել հարկ է և գայդ ընելով մեր հայրենակից պանդուխտներ մեծ ծառայութիւն մատուցած պիտի լինին Ազգին կրթական գործին որ անհուն կարեւորութիւն ունի։

ԱՄԵՐԻԿԵՅԻ ՀԱՅԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

ԲԱՆԱՒՈՐ ՄԱՐԴՈՒ ԲԱՆԱՒՈՐ ՊԱՀԱՆՋ ՆԱՄԱԿ ՈՒՕՔԻԿԸՆԷ

11 Մարտ

Թուէս երկու օր յառաջ Ուօշլբրն էնտ Մօէնի թելի գործարանին մէջ նշանաւոր և նորօրինակ բան մը պատահեցաւ։ 15 տարիէ ի վեր Հայեր կը գործէին հոն, և առաջին անգամ լինելով գործադուլ ըրին։ Հայ գործաւորաց թիւն է այժմ 200 որոց կէսն ցայդ կ'աշխատին և կէսն ցերեկ։ Դոցա 25 հոգին թել քաշելու արհեստն ունին։ և մաս մ'ալ «տրայ հաւոզ և քլինն հաուզ» ըսուած տեղերն կը գործեն, մնացեալք ալ ուրիշ գործերով կը զբաղին։ Երբ Հայերն գործադուլ ըրին, Մր· Բոպէրթ Նէյ անուն գործապետը կառք հեծնելով դիմեց Հայոց տուներն և աղաչեց որ իրենց գործերն դան շարունակեն, բայց Հայերն պատասխանեցին թէ ինչ որ նամակաւ պահանջեր են, կ'ուզեն որ կատարուի։ Ասոր վերայ գործարանին գլխաւորներն խորհուրդ ըրին և որոշեցին զիջանիլ Հայոց։ Երեքօրեայ գործադուլէ յետոյ Հայերն վերսկսան իրենց գործ։ Պարոն Հապէշեան եղաւ Հայոց առաջնորդն այս գործին մէջ որով ամենուս շնորհակալութեանն արժանացած է նա։ Ներփակ կտրոնն տեղւոյս լրագիրներէն կըտրած կը յղեմ որ շնորք ընէք թարգմանելով դնել ձեր թերթի մէջ, որպէս զի պարզուի թէ ինչ էր Հայոց պահանջը։

ԿԻՐԱԿՈՍ Ղ· ՍԱՆԹՈՑԵԱՆ

Ահաւասիկ թէ յիշեալ անգղիերէն թերթին մէջ Հայոց պահանջներն ինչպէս բանաձեւեալ կը գտնեմք.—

«Նախ.— որ գործապետք Հայոց և այլազգաց միջեւ խիր չդնեն և որ՝ թելերն՝ աղէկ կամ գէշ՝ հաւասարապէս բաժնուին թելքաշներուն մէջ՝ առանց ազգայնութիւն զանազանելու։

«Երկրորդ.— երբ ուրիշ ազգէ մէկը իրեն տրուած գէշ թելէն ձանձրանայ, գործապետներ առնլով դէշ թելն Հայու մը վրայ չձգեն զայն։

«Երրորդ, գործապետք պէտք է չվարուին Հայոց հետ իբրև ընդ անասունս—աքացելով, ծեծելով և հայհոյելով։»

Շ. Ս. ՀԱՊԷՇ

ՅԱՅ ԵՒ ՅԱՅՐ

Շիքակոյի մօտաւոր յարուեստահանդէսին մէջ պիտի կազմուի Կրօնական Խորհրդարան մի, որում մասնակցելու համար պաշտօնական հրաւագրեր ուղղուած են նաև Վեհ. Մկրտիչ Խրիմեան կաթողիկոսին ու Սրբազան պատրիարք Աշըդեանի։ Ահա պատուական առիթ մի զՀայ Եկեղեցին իւր իսկական դունով ու ոգւով ներկայացուցանելու աշխարհի, և վերջ տալու Հայ եկեղեցւոյ դէմ եղած զրպարտութեանց որք թիւրիմացութենէ յառաջ եկած են։ Երանի՛ թէ Գեր. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրատեան յդուէր զՀայ Եկեղեցին ներկայացուցանելու այնպիսի ժողովոյ մի մէջ ուր ամեն կրօնի ու եկեղեցւոյ կարող ներկայացուցիչք ներկայ պիտի գտնուին աշխարհի ամեն կողմէն։

* * *

Հէյվըրհիլէ կը գրէ մեզ Տիար Կ. Գ. Մակարեան.—

Այս քաղաքս իբր 30 հազար բնակիչ ունի, և զանազան դաւթականներ շատ, մանաւանդ Հրէեայ և Քանատացի Ֆրանսացի։ Հայերն թուով 30 են։ Մեր Հայրենակցայ 12ը կօշկի գործարանին մէջ և 16ը խաղախորդութեան գործարանին մէջ կաշխատին։ Նկատելով իրենց սակաւապէտ կենցաղավարութիւնը, սոքա յաջող վճարում կ'ընդունին կրնամ ըսել։ Ունինք մի քանիներ որք շաբաթական 20 և մինչև իսկ 30 տոլար կրնան շահիլ իրրև լաւ լէսթրը կամ կաղապար քաշող։ Վարպետ կաղապարող մ'է Պարոն Ճաֆիէրեան, օրինակի համար։

Թուէս երեք օր առաջ կռիւ մը տեղի ունեցաւ Ոսինդըլի կօշկարանին մէջ Հայու մը և Իռլանտացւոյ մը միջև։ (Հայն է Պարոն Կարապետ Օղասափեան, Հիւսէյնիկցի։) Պարոն Կարապետ իրեն համար ունի մեքենայ մը, որուն վրայ կրնայ համարձակ գործել։ Երբ սա ի գործել էր, կոչտ Իռլանտացի մը մօտենալով բիրտ կերպով կը խօսի Հայուն և կ'անցնի։ Հեղ մ'ալ կուգայ նոյն փորձը կ'ընէ, և վերջապէս երրորդ անգամուն՝ Հայուն համբերութիւնն կը հատնի և դառնալով կոպիտ երիտասարդին մէջքէն կը բռնէ գետին կը զարնէ։ Ասոր վրայ կ'ապշի Իռլանտացին որ ժամանակ չէ ունեցեր բռնցի կռուելու։ Հայն մի քանի հարուածով կը կակղցունէ կղզեցւոյն կոչտ ու ամուր մտերն։ Երբ մեր հայրենակից իւր գործողութիւն կ'աւարտէ և կը հանդարտի, ան կեալն ոտքի կ'ելնէ և բռնցամարտի կը ելնի. բայց մեր հայրենակից կարեւորութիւն չտալով կը դառնայ մտեղէն մաքինայէն երկաթէ մաքենային։

Կռիւն կը դադրի։ Հայուն շուրջ կը բոլորեն 50 Իռլանտացիներ ու Քանատացիներ, և սակայն Հայուն անոյշայլ դէմքը տեսնելով ոչ է շարժում ընել չեն համարձակիր։

Բանը շուտով կը հասնի գործապետին ականջը։ Գործապետը չրարկանար Հայուն բայց իրատ կուտայ որ դանակ չգործածեն Հայերն, այլ բռնցամարտ (ֆայթ)ովրին. մինչև անգամ կ'ըսէ թէ ինք պատրաստ է յատուկ ուսուցիչ յղել Հայոց տունը որ սովրեցունէ։ Այս տեղ գործադուլ շատ կը պատահի, անոր համար է թերեւս որ գործարանապետն Հայերուն թիւն չատցունել կ'ուզէ, և թէ գործաւորներն այնքան խոժոռ կը նային Հայերուն։

Եթէ Մեր Հայերն մաքրութեան հոգ տանին թէ իրենց տներու և թէ իրենց հագուստի, մազերու, ձեռաց և եղունգներու, կօշկի և այլ մասին. եթէ ֆայթ սովրին որ դանակի վտանգաւոր օգնութեան դիմելու չստիպուին, և ամեն կերպով իրենց պատիւը պահեն, տարակոյս

չունիմ թէ շատ աւելի յաջողութիւն պիտի ունենան այս տեղ և ամենուրիշ տեղ։

*
* *

Լինի մէջ պատահած վերջին կռուոյն վերայ տեղական թերթին հրատարակութիւնն ունի հետևեալ իմաստն—

Մեծ յուզում պատճառեցաւ երէկ ի Լին Հայոց ուրիշ մէկ եղեռնաւոր յարձակմամբ։

Երկու մարդ, Էնտրիու Շէվէր և Ճէյմս Մըրֆի կը գնային Մարքէթ փողոցն ի վար երբ երկու Հայեր յարձակեցան նոցա վերայ և մէն դաշոյնն հանելով Շէվէրի երեսը վիրաւորեց։ Շէվէր դեռին փռուեցաւ արիւնաթաթախ։ Հայերն փախան ի տուն և անհետացան եղան։ Մեծ ամբոխ ժողովեցաւ տեսարանի վայրն, այնպէս զրոյց տարածուած լինելով թէ մարդը սպանուած է։ Ոստիկանք և գրգռեալ հետաքրքիրներու բազմութիւնն հասան ի Հայոց տունն, որ աղաստութեան սոսկալի վիճակի մէջ էր, սենեակներն գրեթէ անկահ անկարասի, բաց ի խոհարարական գործիներէ և նմանեաց։

Մին ձերբակալուեցաւ, բայց յետոյ արձակուեցաւ։ բուն յարձակողներն դեռ չեն գտնուած։

Նաև տրուած վէրքերն այնքան ծանր չեն եղեր որքան ի սկզբան կ'ենթադրուէին։ Երկու կարուած կայ երեսին վերայ, և ան ալ շատ խորուկ չէ։ Ոստիկանաց ոմանք կը տարակուսին Շէվէրի և Մըրֆիի պատմածին ստուգութեանը վերայ։

*
* *

Շիքակոյէն կը գրեն մեզ թէ ութ Հայեր իբրև առաջնորդ և թարգման լաւ տեղեր բռներ են Արուեստահանդիսին մէջ։

*
* *

Վուսթերի մէջ 2 Հայու և 3 Իռլանտացւոց միջև կռիւ մի տեղի ունեցեր է Մարտ 1ին։ Թէև երկուստեք ալ վիրաւորուած են ձեռքի հարուածներով, Իռլանտացիներն եղած են վերջապէս յաղթուելով խոյս տուողներն։

*
* *

Փալիֆոռնիայի մեր Հայրենակիցք ըսկսած են մտածել խաղողէն բէքմէզ շինել, որ, կը յուսան, աւելի շահաւոր պիտի լինի քան զշամիչ։

Անցեալ տարի յաջողած մէկ երկու Հայեր ալ տուն շիներ են Ֆրէզնոյի մէջ։

*
* *

Յակոբ Պոնճուքլեան, իբր 30տարեկան երիտասարդ, Մալաթիացի, որ երեք տարիէ ի վեր յԱմերիկա կը գտնուէր, յետ սակաւօրեայ հիւանդութեան կնքեր է իւր մահկանացուն։

Կը կարծուի թէ գործ գտնելու համար անցեալ օր Լինի կողմն մի անգամ 3 ժամ ձիւնի մէջ սպասելու ստիպուած լինելով՝ պաղ առած է, և անոր հետևանքն եղած է մահաբեր հիւանդութիւնն։

*
* *

Խարբերդու կողմէն Հայ մի աչքի տըկարութիւնն դարմանելու համար Նիւ Եորք քաղաքի Պէլվիւ հիւանդանոցն դիմած է անցեալ օր, և բժիշկք, առանց կանխաւ հիւանդին իմացունելու և հաւանութիւնն ստանալու, եթերով անզգայացուցած են զինքն և գործողութիւն մի կատարած են աչքին վերայ։ Միայն երեք օր յետոյ երբ հայրենակիցներ կ'ելթան զինքը տեսնել և աչքն բանալ կուտան, կը տեսնեն թէ աչքն խլուած հանուած է։ Հիւանդը կըսէ թէ չտեսներ դեռ, և այցելուք կը պատասխանեն թէ աչքն հաներ են։ Զայս լսելով՝ կը սարսափի խեղճն, և ամեն բանէ զզուած սրտաբեկ կը վերադառնայ հայրենիք։

Մեր անիրաւեալ հայրենակից փոխան չուելու յարևելս, պարտէր դատ բանալ բժշկին դէմ և տուգանք ընդունիլ։

Շնորհակալութեամբ ստացանք ԱՐԱՌՍ Վեցամսեայ Պատկերազարդ Հանդիսի 1892 տարւոյ Բ. թիւն՝ ընտիր պարունակութեամբ։

ԱՐԱՌՍ, ի մէջ այլոց, կը պարունակէ զպատկեր Կիւլիզարի և զԳրիգոր Արծրունւոյն։ Ուշադրութեան արժանի է Տ. Խորէն Նարպէյ Արքեպիսկոպոսի մասին պոլսական թղթակցութիւնն, որ անաչառ գրչի ծնունդ կ'երևի, և զպասարիարք Աչըզեան կը հարուածէ ըստ արժանւոյն։

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ինչ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ'ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալէրի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմաններին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէռն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

«Հայքի» մուտքն ի Ռուսիա ազատ է։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան։ բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 գաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէեանի, 1891, գին 1 թալէռ. կամ 5 ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

«ՀԱՅՔ»
Թղթակցմամբ

Ա. տարի 1տոլար 50 սէնթ կամ 7ֆր. 50ս.
Բ. տարի 2տոլար կամ 10 ֆրանք

Մեծայարգ Տի. Մ. Զերազ իւր թերթի անգլիերէն հրատարակութիւնն գադրեցուցած է չորրորդ տարւոյնսկիզբէն, և միայն ֆրանսերէն պիտի հրատարակէ «ԼԱՌՄԷՆԻՆ», ամիսն մէկ անգամ։ Թերթին տարեկան բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ կամ 18ֆր. 75սանթիմ։ Հասցէն՝.
33 DE VERE GARDENS, LONDON, W. ENGLAND

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք
26դ. և 27դ. Փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

KRONOFF & OLDSEN

FINE CUSTOM TAILORS
And Dealers in

GENT'S FURNISHINGS
ԴԵՐՁԱԿ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԱՎԱՃԱՌ

214 Main St.
WORCESTER MASS.

Ցակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան
348 Fountain street 28 South Margin Street
Providence R. I. U. S. A. Boston, Mass

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորք Էքիզեան

HOPKINS & ATKINS
PATENTS washington, D. C. 20 years' experience
write for informatian

RECULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԴԱԲՐԻԷԼԵԱՆ

NORBERT FRANCK
ԴԵՂԱԳՈՒՆ

311 7դ Էվինիու Նիւ Եորք
27դ և 28դ Փողոցներու միջև
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԻՆԵՂԱՔԱՐԱՆ

(Հաստատեալ ի 1849)

56 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը հարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբոց կէսէն հաշուելով։

A. A. McLAUGHLIN

137 MAIN ST.
WORCESTER, MASS

Ես բազում Հայ յաճախորդներ ունիմ և ամեն չաբաթ երեկոյ հայազգի վաճառող մ'ալ կը պահեմ վաճառատանս մէջ որ անգլիերէն խօսելու անվարժ Հայերու կը ցուցնէ մեր ապրանքներն, որք են գըլխարկ, վերարկու, սոնաղգեստ (փանթոլոն), գուլպա, չապիկ ևն. ևն. Մեր գին ամենուն համար մէկ է եւ չափաւոր է. եկէք եւ տեսէք։